

ԽՈՅՄ ԺՈՂԿՈՄԽՈՐՁԻՆ ԿՒՑ

ՄԹԵՐՄԱՆ ԿՈՄԻՏԵՅԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԼԻԶՈՐՈՒԹՅՈՒՆ

# ՅՈՒՅՈՒԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒ ԱՆԳԱՅԱԿԱՆ  
ՏԵՇԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՂՄԻՑ 1935 թ.  
ԲԵՐՔԻՑ ՊԵՏՈՒԹՅԱՆ ՊԱՐՏԱԴԻՐ ԿԱՐԳՈՎ  
ՀԱՅԱՀԱՏԻԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԽՍՀՄ  
ԺՈՂԿՈՄՄՈՐԴԻ ՅԵՎ ՀԱՄ Կ(Բ)Կ ԿԵՆՏԿՈՄԻ  
ՎՈՐՈՇՈՂԻՄ ԿՅԱՆՔԱԻՄ ԿԻՐԱԼԵԼՈՒ ՄԱՍԻՆ

38  
h-11



38  
B-11  
45

କବିତା ପାତ୍ର

Կոլեցիանությաւնների ու տնհատական տնտեսությաւնների  
կազմից 1935 թ- ընթից պետությանը պարտադիր կարգավ հայ-  
նաժիկ հանձնելու վերաբերյալ ԽՍՀՄ ժողկումնահի յև Հայ և (Բ) և  
Կենտկոմի փասումը կյանքում կիրառելու մասին

ԿՈՒՏՆԱԾԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

## ԶԱՓԵՐԸ ՀԱՇՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ

1. Պետությանը հացահատիկի պարտադիր հանձնման  
չափը յուրաքանչյուր կոլտնտեսության համար հաշվում ե  
և ԱՀՄ ԺԿԽ-ին կից Մթերման կոմիտեյի շրջանային  
լիազորը:

2. Պետությանը պարտադիր կռագով հացահատիկ հանձնելու հաշվարկը կատարվում է հետևյալի հիման վրա.  
ա) ըստ հացահատիկային մշակույթների (կուլտուրաների) գարնանացանի և աշնանացանի պլանների, վոր հաստատված են տվյալ կոլտնտեսության համար շրջաբնակոմի կողմէց.

բ) մի հեկտարից հացահատիկի հանձնման այն նոր-  
մաների համաձայն, վորոնք հաստատված են ԽՍՀՄ ԺԿԽ-ին  
կից Մթերման կոմիտեյի կողմից և հրապարակված են  
ՀՍԽՀ ԺԿԽ-ի և ՀԿ(ը)կ կենտրոնական վորոշումով տվյալ վար-  
չական շրջանի ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտքն-  
տեսությունների համար առանձին և ՄՏ կայանների կող-  
մից չսպասարկվող կոլտքնտեսությունների համար առանձին

3. Յուրաքանչյուր կոլտնտեսության համար կիրառվում և հացահատիկի պարտադիր հանձնման միայն մեկ նորմա՝ կամ ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտըն-

3976 1008 36874

տեսությունների համար սահմանված նորման, կամ ՄՏ կայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված նորման:

4. Կոլտնտեսությունների համար հացահատիկի պարտադիր հանձնման չափը վորոշելուց առաջ, ԺԿԽ-ի Մթերման կոմիտեյի շրջանային լիազորները պարտավոր են կազմել իրենց շրջանի բոլոր կոլտնտեսությունների ցուցակը, բաժանելով նրանց՝ ՄՏ կայանների կողմից սպասարկվող և ՄՏ կայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների, մատնանշելով յուրաքանչյուր կոլտնտեսության համար աշնանացան ու գարնանացան մշակույթների պլանները, առանձնացնելով ցորենը:

Պարտավորությունները հաշվելուց առաջ կոլտնտեսությունների ցուցակը պետք է ստուգված լինի յերկու կողմից՝ արդյոք համապատասխանում ե բոլոր կոլտնտեսությունների ցանքերի գումարն ամբողջովին վերցրած՝ տվյալ շրջանի կոլտնտեսությունների համապատեսության կողմից հաստատված ցանքերի պլանին, ինչպես բոլոր հացահատիկային մշակույթների վերաբերյալ, այնպես ել ցորենի վերաբերյալ առանձին. յերկրորդ՝ համապատասխանում ե արդյոք ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների ցանքի պլանների գումարը հանրապետության կողմից այդ կոլտնտեսությունների համար հաստատված ցանքերի պլանին:

Ծանօթարյուն. — Պարտադիր հանձնումը առաջածվում է տարեկանի, ցորենի, բակալային կուլտուրաների (սիսեռ, վոստ, լոբի և այլն) և այլ մշակույթների ցանքերի վրա (գարի, վարսակ, ցորեն, կորեկ, հնդկացորեն, յեգիպտացորեն, հաճար և այլն):

Կերպային խոտաբույսերի, սորգո, բանջարանոցային, տեխնիկական, ձիթենու և այլն ցանքերը, պետությանը հացահատիկի պարտադիր հանձնման չափերը վորոշելու ժամանակ հաշվարկվելում:

5. ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների ցուցակը սահմանելու ժամանակ ԺԿԽ-ի Մթերման կոմիտեյի լիազորները պետք ե դեկավարվեն.

ա) Կոլտնտեսության և ՄՏ կայանի միջև արտադրական սպասարկման համար յեղած պայմանագրերի հիմանվրա, այսինքն՝ ՄՏ կայանի կողմից 1935 թ. բերքից բնավարձով վարձատրվող աշխատանքներ կատարելու համար.

բ) Նրանով, վոր ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար հանձնման սահմանված նորմաները տարածվում են միայն այն քանակությամբ կոլտնտեսությունների վրա, վորոնց աշնանացան և գարնանացան մշակույթների ցանքերի պլանների ընդհանուր գումարը չի գերազանցում ցանքերի այն պլանները, վոր հաստատված են ՀՍԽՀ ժողկոմիսորնի կողմից՝ ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար:

Ծանօթարյուն. — 1. Այս գեպքում, յերբ շրջանների միջև գոյություն ունեցող պայմանագրերով ընդգրկված կլինիկ այնպիսի քանակությամբ կոլտնտեսություններ, վորոնց ցանքերի ընդհանուր տարածությունը տվյալ շրջանի համար սահմանված պլանից ավելի յե, ԺԿԽ-ի Մթերման կոմիտեյի շրջանային լիազորը պարտավոր և այդ մասին հայտնել հանրապետական լիազորին և այդպիսի գեպքերում դեկավարվել նրա ցուցումներով.

2. Այս կոլտնտեսությունների նկատմամբ, վորոնք կը սպասարկին պարտավորագրերը հանձնելուց հետո նոր կազմակերպված ՄՏ կայանների կողմից, շրջանային լիազորը պարտավոր և պարտավորագրերը փոխելնորերով՝ ՄՏ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար վորոշված նորմաներով միայն այն գեպքում, յեթե ՄՏ կայանների և կոլտնտեսությունների միջև կնքված կլինիկ արտադրական պայմանագրեր, վորոնցով նախատեսվում են 1935 թ. բերքից բնավարձով վարձատրման յենթակա աշխատանքներ, և նախատեսված ե կոլտնտեսական հացահատիկի կալսումը ՄՏ կայանի կալսիչ մեքենայով:

3. Այս շրջաններում, վորտեղ ՄՏԿ-ները կազմակերպվել են բերքահավաքի ընթացքում և կոլտնտեսություններում

կատարում են միայն կալման աշխատանքները, չիշյալ կոլտնտեսություններն ստանում են պարտավորագիր՝ յել-ՄՏՀ-ների կողմից սպասարկվող կոլտնտների համար սահմանված նորմաներով միմիայն այն դեպքում, յեթե ՄՏՀ կատարած կալումը կազմում է տվյալ կոլտնտեսության ունեցած հացահատիկի ցանքի 50% կամ վոչ պակաս: Իսկ յեթե նոր կազմակերպված ՄՏՀ-ի կատարած կալումը տվյալ կոլտնտեսության հացահատիկի ամբողջ ցանքի 50% կամ պակաս է, այս դեպքում պարտավորագրերն ստանում են ՄՏՀ-ի կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների նորմաներով:

4. Կոլտնտեսությունների և ՄՏՀ կայանների միջև կնքած ագրոնոմիական, կուտ-կենցաղային, կազմակերպչական և այլ սպասարկման պայմանագրերը, վորոնց համար բնափառձի կարգով վարձատրություն չի պահանջվում, իրավունքի տալիս նման կոլտնտեսությունների նկատմամբ կիրառելու ՄՏՀ կայանների կողմից սպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված հանձնման նորմաները:

6. Այն դեպքում՝ յերբ կհաստատվի, վոր այս կամ այն կոլտնտեսությունը, վոր ՄՏՀ կայանի հետ կնքած պայմանագրեր ունի արտադրական սպասարկման համար, սակայն փաստորեն արտադրականապես չի սպասարկվում ՄՏՀ կայանի կողմից, և այդ կոլտնտեսության բերքի վում ՄՏՀ կայանի կողմից չի կատարվում, — շրջանակալումը ՄՏՀ կայանի կողմից չի կատարվում, ինչն իտապորը ՄՏՀ կայանի և կոլտնտեսության միջև կնքած յին լիտապորը ՄՏՀ կայանի և կոլտնտեսության միջև կամաց հայտնում է ժողովային ՄՏՀ կայանի կոմիտեյի հայտադրություն:

Այդ հարցը կենտրոնում ՀԺԿ-ի հետ լուծելուց հետո, ժողովային ՄՏՀ կայան կոմիտեյի շրջանային լիտապորն անմիջապես վոչչացնում է մինչ այդ տրված պարտավորագրերը, այդպիսիները փոխարինելով նորով, վորոնք հաշված պիտի լինեն ՄՏՀ կայանների կողմից չսպասարկվող կոլտնտեսությունների համար սահմանված հանձնման նորմաներով:

7. Յեթե յերկու կոլտնտեսություն միանում են

նրանց պարտավորագրեր հանձնելուց հետո, և յեթե պարզվում է, վոր այդ կոլտնտեսություններից մեկն սպասարկվում է ՄՏՀ կայանի կողմից, իսկ մյուսը չի սպասարկվում, միացյալ (իոշորացած) կոլտնտեսությունն առաջադրանք է ստանում ՄՏՀ կայանի կողմից սպասարկվող կոլտնտեսությունների նորմաներով:

Կոլտնտեսությունները յերկու կամ մի քանի կոլտնտեսությունների բաժանվելու դեպքում, յուրաքանչյուր կոլտնտեսության համար առաջադրանքի չափը վորոշվում է, նայած նրան, թե նոր կազմակերպված կոլտնտեսությունն սպասարկվում է կամ չի սպասարկվում ՄՏՀ կայանի կողմից:

8. Յուրաքանչյուր կոլտնտեսության համար պարապորագրի չափը հաշվվում է բոլոր հացահատիկային մշակույթների համար ամբողջովին վերցրած, իսկ ցորենի համար՝ առանձին:

9. Կոլտնտեսությունների կողմից առանձին մշակույթների պարտադիր հանձնման չափը հաշվվում է.

ա) ցորենի համար 1934 թ. աշնանը և 1935 թ. գարնանը շրջկործկոմի կողմից կոլտնտեսության համար սահմանված ցանքի պլանի հիման վրա, ինչպես և ՀՍԽՀ ժենարժությունը կենտրոնացնելու վորոշման մեջ հրապարակված յուրաքանչյուր շրջանի համար մի հեկտարից այդ մշակույթներից յուրաքանչյուրի հանձնման նորմայի հիման վրա.

բ) «Այլ» հացահատիկային մշակույթների համար, այն ե՝ տարեկան, բակլային, վարսակի, գարու, յեգիպացորենի, կորեկի, հնդկացորենի, հաճարի, սերմացու վիկի, հացահատիկի պարտադիր հանձնման չափը վորոշվում է այն մնացորդով, վոր տրվում է կոլտնտեսության համար բոլոր հացահատիկային մշակույթների առաջադրանքի սահմանված չափից, հանելով կոլտնտեսության համար ցորենի պարտադիր հանձնման սահմանված քանակը:

**ՈՐԻՆԱԿ.** կոլտնտեսությունը, պլանների համաձայն, պարտավոր ե ցանել՝ աշնանացան մշակույթներ՝ 100 հեկտար, գարնանացան՝ 400 հեկտար: Տվյալ շրջանի մի հեկտարից հանձնելու նորման բոլոր հացահատիկային մշակույթների համար սահմանված ե մի հեկտարից 50 կիլոգր.:

Այսպիսով, պետությանը հացահատիկի պարտագեր հանձնման ընդհանուր չափը կազմում է՝ 50 կիլոգր.  $\times$  (100 հեկտար + 400 հեկտար) = 250 ցենտներ:

Առանձին մշակույթների վերաբերյալ տվյալ կոլտնտեսության համար հանձնման չափը հաշվում ե հետեւյալ կերպ:

**ՅՈՐԵՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ.** կոլտնտեսությունը պլանների համաձայն պետք ե ցանի 50 հեկտար աշնանացան ցորեն և 100 հեկտար գարնանացան: Մի հեկտարից ցորենի, հանձնման նորման կոլտնտեսությունների համար սահմանված ե 60 կլգր., ուրեմն կոլտնտեսությունը դեռք ե հանձնի 60 կլգր.  $\times$  (100 + 50) = 90 ցենտ.:

**ԱՅԼ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ.** կոլտնտեսությունների կողմից հանձնման յենթակա «այլ» (մնացած) հացահատիկի մշակույթների քանակը կազմում է 250 — 90 = 160 ցենտներ, վորը հանձնվում ալլ մշակույթներով, համաձայն նրանց ցանքսերի տարածության կամ այդ մշակույթներից վորեն մեկով:

10. Կուլտուրաների համար պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունները հաշվելու ժամանակ ժողկոմխորհի Մթերման Կոմիտեյի շրջանային լիտորները կարող են հանդիպել հետեւյալ դեպքերի.

ա) այլ մշակույթների հանձնման նորմաներն անհամեմատ ավելի բարձր գուրս կդան՝ ինչպես բոլոր հացահատիկային մշակույթների շրջանների համար սահմանված միջին նորմաների նկատմամբ, այնպես ել բերքատվու-

թյան համեմատությամբ: Այդ դեպքում կոլտնտեսությունը հանձնում ե հացահատիկն այն չափով, վոր նշանակված ե պարտավորագրում մշակույթների ընդհանուր գումարի համեմատ, ըստվորում կազմակերպությունն իրավունք ունի այլ մշակույթների հաշվին հանձնել հիմնական մշակույթներ.

բ) ամբողջ պարտավորագրերի մեջ մատնանշված հացահատիկի հանձնման չափը լրացվում ե ցորենով: Այդ դեպքում այլ մշակույթներ ստանալու հաշվարկ չի կատարվում.

գ) պարտավորագրերի համաձայն, ցորենի հանձնումը, վոր հաշվառմ ե այդ մշակույթի համար սահմանված նորմայով, գերազանցում ե փողջ պարտավորագրերի մեջ մատնանշված ամբողջ հանձնման չափը: Այդ դեպքում ցորենի նորմաներով հաշված հանձնման չափի ու միջին նորմայով հաշված հանձնման չափերի միջև յեղած տարբերությունը հանվում ե.

դ) ցորենի հանձնման հաշված չափն իր ամբողջ գումարով այնպիսի քանակություն ե կազմում, վորը պակաս ե բոլոր մշակույթների համար կոլտնտեսություններից հասանելիք միջին նորմայով հաշված հանձնման ընդհանուր չափից, իսկ այլ մշակույթներ կոլտնտեսությունը չի ցանել: Այդ դեպքում կոլտնտեսությունը հանձնում ե «այլ մշակույթներին» ընկնող տարբերությունը ամեն մի ցանկացած հիմնական մշակույթից.

ե) յերբ կոլտնտեսությանը տված ե ցանքի պլան մի մշտկույթի համար, այդ դեպքում հարկադրումը կատարվում ե միջին նորմայով:

11. Մենատնտեսների կողմից թողած և չողտագործված ցանքերը, վորոնք հանձնված են կոլտնտեսություններին կամ այլ հիմնարկություններին, հարկադրվում են մենատնտեսների նորմաներով և ավելացվում ե կոլտնտե-

սության տված պարտավորության վրա, վորը յեղել ե վո-  
րոշված տվյալ կոլտնտեսության համար, համաձայն նրան  
տրված աշնան և գարնան ցանքերի պլանների:

12. Անպայման արգելվում ե հանդիպական պլանների  
տալը կամ կոլտնտեսությունների վրա հացահատիկ հանձ-  
նելու այնպիսի պարտավորություններ դնելը, վորոնք գե-  
րազանցում են սահմանված հեկտարային նորմաները.  
նույնական արգելվում ե հարկադրել կոլտնտեսությունների  
կողմից 1934 թ. աշնանը և 1935 թ. գարնանը նրանց  
տված պլանից դուրս կատարված ցանքերը:

## II. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ԶԱՓԵՐԻ ՀԱՇՎԱՐԿՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

13. Յելներով անհատական տնտեսությունների հա-  
մար հանրապետական կազմակերպությունների կողմից սահ-  
մանված աշնանացան ու գարնանացան մշակույթների ցան-  
քի պլաններից, ըջգործկոմը սահմանում ե մենատնտես-  
ների ցանքերի պլաններն ըստ գյուղխորհուրդների՝ ան-  
պայման դեկով ցորենը:

14. Այն մենատնտեսների ցանքերը, վորոնց տրված  
չեն յեղել ցանքի պլան (գաղտնի ցանք), հարկադրվում  
են համաձայն փաստացի կատարված ցանքի և տվյալ շըր-  
ջանի մենատնտեսների համար սահմանված նորմաներից  
50% ավելի:

15. Անհատական տնտեսությունների կողմից պետու-  
թյանը պարտադիր կարգով հացահատիկի հանձնման  
չափերը վորոշելու համար գյուղխորհուրդները, ապ-  
չափերը վորոշելու համար գյուղխորհուրդները, ապ-  
չափերի 10%-ից վոչ-ուշ, կազմում են տվյալ գյուղխորհուրդի  
գործունեյության ըջանի անհատական տնտեսությունների  
ցուցակները, նրանց մեջ նշելով հետեւյալ ցուցանիշները.  
ա) ցուցակագրված տնտեսությունների համարներն  
ըստ կարգի.

բ) տնտեսությունների մշտական համարներն ըստ  
գյուղխորհուրդների ցուցակների.

գ) անհատական տնտեսության գլխավոր անձի ազ-  
գանունը, անունը և հայրանունը.

դ) յուրաքանչյուր անհատական տնտեսության հացա-  
հատիկի ցանքի պլանը՝ 1934 թ. աշնանացան մշակույթ-  
ների ցանքի պլաններն առանձին և 1935 թ. գարնանա-  
ցանի պլաններն առանձին, զատելով (նրանց թվում) ցո-  
րենն առանձին:

16. Ժողկոմխորհի Մթերման կոմիտեյի ըրջանային  
վիազորն անպայման ստուգում ե գյուղխորհուրդների կող-  
մից կազմված անհատական տնտեսությունների ցուցակը,  
նկատի ունենալով, նախ՝ համապատասխանում ե արդյոք  
անհատական տնտեսությունների ցանքի ընդհանուր  
չափը ըրջգործկոմի կողմից տվյալ գյուղխորհուրդի մենա-  
տնտեսների համար սահմանված ցանքի պլանին—ինչպես  
բոլոր հացահատիկային մշակույթների նկատմամբ, այնպես  
ել ցորենի նկատմամբ առանձին, յերկրորդ՝ համապատա-  
խանում ե արդյոք ըրջանի բոլոր անհատական տնտե-  
սությունների ցանքի պլանների գումարն ամբողջովին  
վերցրած տվյալ ըրջանի անհատական սեկտորի համար հան-  
րապետության կողմից հաստատված ցանքի պլանին:

17. Պարտադիր կարգով գյուղխորհուրդների կողմից ցու-  
ցակագրվում են այն անհատական տնտեսությունները, վո-  
րոնց հացահատիկային մշակույթների ցանքերի պլաններ են  
տրված 1934 թ. աշնան և 1935 թ. գարնան համար, նույն-  
պես և այն անհատական տնտեսությունները, վորոնց ցան-  
քի պլան ե տրված կամ միմիայն աշնանացան, կամ միմի-  
այն գարնանացան հացահատիկային մշակույթների համար:

Այդպիսի անհատ տնտեսությունները պարտագրվում  
են պետությանը պարտադիր կարգով հացահատիկ հանձնել:  
Ծանոթություն.— Ցուցակների մեջ չեն մտցվում՝

ա) այն յերկաթուղային բանվորներն ու ծառայողները,

վորոնք յերկաթուղու ոտարացման շերտում ցանքեր են կատարում և չեն մտնում ցանքերի պլանի մեջ.

բ) անտառային այն պահակները, վորոնց հատկացված հողամասերը գտնվում են անտառային պահակների կողմից պահպանվող անտառային տեղամասերի տերիտորիայում, այն պայմանով միայն, յեթե այդ աշխատողները գյուղում ցանքեր չունեն:

գ) այն բանվորներն ու ծառայողները, քաղաքացիական պատերազմի հաշմանդամներն ու թոշակառւները, վորոնք չեն ոգտվում ցանքային հողամասերից, թեպետ նրանք ցանքեր են կատարում իրենց բնակավայրերի տնամերձ հողամասերում:

18. Կուլակային տնտեսություններն առանձնացվում են, և նրանց համար կազմվում ե առանձին ցուցակ, այդ տնտեսությունների նկատմամբ մեկ հեկտարից հանձնման նորման վորոշվում ե  $50^0/_{\circ}$ -ով բարձր հանձնման այն նորմայի համեմատությամբ, վորը սահմանված ե տվյալ գյուղխորհրդի սահմաններում գտնվող մենատեսների համար:

19. Պետությանը հացահատիկի հանձնումն այն մենատեսների պարտավորագրերով, վորոնք կոլտնտեսության մեջ են մտել բերքահավաքից առաջ, կոլտնտեսության կողմից կատարվում ե տվյալ կոլտնտեսության համար սահմանված նորմաներով. կոլտնտեսության վարչությունը նման գեպքերում վերցնում ե կոլտնտեսության մեջ մտած մենատեսներից նրանց հանձնած պարտավորագրերը և այդիսիները վերադարձնում ե, 1935 թ. հուլիսի 15-ից վոչ ուշ, ֆողկոմխորհի Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորին, վորն այդ պարտավորագրերի փոխարեն կոլտնտեսության համար դուրս ե գրում նոր (լրացուցիչ) պարտավորագիր՝ հաշվելով այդ պարտավորագրերի հացահատիկի հանձնման քանակը՝ յեներով տվյալ կոլտնտեսության տըգած նորմայից և կոլտնտեսության մեջ նոր մտած մենատեսների հացահատիկային ցանքերի պլաններից:

Անհատական տնտեսությունները, վորոնք կոլտնտեսության մեջ են մտել բերքահավաքի կամպանիան սկսելուց հետո, հացահատիկը հանձնում են իրենք անձամբ, կամ կոլտնտեսության միջոցով՝ նրանց տված պարտավորագրերի համաձայն՝ մենատեսների համար սահմանված նորմաներով:

20. Համամիութենական ֆողկոմխորհի ս. թ. մարտի 3-ի՝ խորհանտեսություններում աշխատող մենատեսների մասին յեղած 338 վորոշման համաձայն չեն ստանում ցանքի պլանային առաջարանք և ազատվում են պետությանը հացահատիկ հանձնելուց այն անհատական տնտեսությունները, վորոնց՝

ա) տնտեսության պետը (ընտանիքի հիմնական աշխատավորը), համաձայն աշխատավորական պայմանագրի, անցել ե մշտական աշխատանքի՝ խորհանտեսության մեջ և

բ) յեթե այդ տնտեսության մնացած բոլոր աշխատունակ անդամները խորհանտեսության հետ կնքել են պայմանագրեր սեղմնային աշխատանքների համար:

21. Այս հրահանգի 15, 16, 17, և 18 հոդվածների համաձայն, գյուղխորհուրդների կողմից մի որինակից կազմած անհատական, աշխատավորական և կուլակային տընտեսությունների ցուցակները ապրիլի 15-ից վոչ ուշ, ներկայացվում են ֆողկոմխորհի Մթերման Կոմիտեյի շըգանային լիազորի միջոցով շրջգործկոմի նախագահությանը՝ քննության համար:

22. Շրջանային լիազորը, շրջգործկոմի կողմից ցուցակները հաստատվելուց հետո, 5 որվա ընթացքում, հաշվում ե ամեն մի տնտեսության կողմից պետությանը պարտադիր կարգով հացահատիկի հանձնման պարտավորությունների չափերը՝ նշելով արդյունքները ցուցակների մեջ: Հացահատիկի հանձնման չափը վորոշելիս ֆողկոմխորհի Մթերման Կոմիտեյի շրջիազորը ղեկավարվում ե հետևյալով:

ա) շրջգործկոմի նախագահության կողմից հաստ ռազմաձև ցուցակով.

բ) ցուցակում ցույց տված յուրաքանչյուր անհայտական տնտեսության ցանքերի տարածությամբ.

գ) մենատնտեսների համար սահմանված մի հեկտարից հացահատիկի հանձնման նորմայով:

Անհատական տնտեսությունների կողմից պետությանը հացահատիկի հանձնման պարտավորությունների չափերի հաշվարկը ժողկոմիսորին Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորը կատարում է ինչպես բոլոր հացահատիկային մշակույթների համար ամբողջովին վերցրած, այնպես ել ցորենի համար առանձին՝ բաշխելով բոլոր մշակույթների հանձնման հանրագումարն ըստ ամիսների:

Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորը հացահատիկի հանձնման չափերի հաշվարկը վերջացնելուց հետո հանում ե լրացրած ցուցակների ձիւտ պատճենները և պահում ե իր գործում:

23. Անպայման արգելվում ե անհատ տնտեսությունների հանդիպական պլան տալը, կամ նրանց վրա հացահատիկ հանձնելու այնպիսի պարտավորություն դնելը, վորը գերազանցնում ե սահմանված հեկտարային նորման:

Ծանոթություն.— 1) Համամիութենական ժողկոմիսորին և Համկամկուսի Կենտկոմի ս.թ. փետրվարի 15-ի՝ «Գարնանացանի պլանի» մասին յեղած վորոշման համաձայն, մենատնտեսների կողմից նրանց տված 1934 թ. աշնանացանի և 1935 թ. գարնանացանի պլանից ավելի ցանքած ցանքերը հարկադրվում են տվյալ շրջանի մենատնտեսների համար սահմանված հանձնման նորմաների 50 % ի չափով (կիսով).

2) մենատնտեսների ցանքերի հաշվառման ժամանակ պետք ե հաշվի առնել և այն ցանքերը, վորոնք կատարված են տվյալ մենատնտեսների տնամերձ հողամասերում:

### III. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԸ ԼՐԱՑՆԵԼՈՒ ՅԵԿ ՀԱՆՁՆԵԼՈՒ ԿԱՐԳԸ

24. Յուրաքանչյուր կոլտնտեսությանը և անհատ տընտեսությանը հանձնվում է գրավոր, պատշաճ ստորագրություններով և ժողկոմիսորին Մթերման Կոմիտեյի շրջիազորի կողմով կնքված պարտավորագրի՝ պետությանը հացահատիկ հանձնելու չափի մասին:

Կոլտնտեսության հանձնվող պարտավորագրերն ստորագրում են շրջգործկոմի նախագահը և Մթերման Կոմիտեյի շրջիազորը:

Պարտավորագրերը պիտի խնամքով և լրիկ լրացնել, առանց վորեւ ջնջումների և բացթողումների: Պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորության չափն անպայման պետք ե գրել տառերով:

Այս կարգով լրացրած պարտավորագրերը հանձնվում են անպայման կոլտնտեսության նախագահին կամ նրա տեղակալին:

Կոլտնտեսության նախագահը կամ նրա տեղակալը պարտավորագրին ստանալու առթիվ ստորագրում է Մթերման շրջիազորի մոտ գտնվող ցուցակում: Անպայման պետք ե ցույց տալ պարտավորագրերի հանձնման ժամկետը (Այդ ցուցակում, բացի հացահատիկի հանձնման քանակից, պիտի ցույց տված լինի և պարտավորագրի սերիայի համարը):

Ծանոթություն.— 1. Խստիվ արգելվում է հանձնել հացահատիկը հանձնողներին ուրիշ պարտավորագրի քան այն, վոր տպված են Գոսպակի կողմից և ուղարկված են տեղերը Մթերման Կոմիտեյի միջոցով:

2. Այս պարտավորագրերը, վորոնք տրվելու յեն սերմարուծական կոլտնտեսություններին, Մթերման Կոմիտեյի շրջիազորները նրանց վրա նշում են «Գոսպարտֆոնդ» (Պետական ֆոնդ), վորի համար Գոսպարտֆոնդը պարտասում ե համապատասխան քանակությամբ կնիքներ՝ «Պետական ֆոնդ»:

25. Առանձին կոլտնտեսություններ Զագոտղեռնոյի կամ Գոսսորտֆոնդի հացամթերման կայաններին կցելիս թույլատրվում ե, յելնելով տեղի պայմաններից, կցել այս կամ այն կոլտնտեսությունը հարեան շրջանի մթերման կայանին կամ յերկու մթերման կայանների:

26. Մենատնտեսներին հանձնվելիք պարտավորագրերը լրացվում են մթերման շրջիազորի կողմից՝ համաձայն շրջգործկոմի նախագահության հաստատված ցուցակի և այդ ցուցակում նշած հացի հանձնման քանակի:

Կուլակային տնտեսություններին հանձնվելիք պարտավորագրերի վրա դրվում ե կնիք՝ «կուլակային տնտեսություն»:

27. Մթերման շրջիազորի կողմից մենատնտեսների համար լրացրած և նրա կողմից ստորագրված պարտավորագրերը մենատնտեսների մի ցուցակի հետ միասին ուղարկվում են համապատասխան գյուղխորհրդին՝ մենատնտեսներին հանձնելու համար, առաջարկելով պարտավորագրերի հանձնման մտախն ստորագրել տալ այդ ցուցակում, փորի մեջ մթերման շրջիազորը նույնպես նշում և պարտավորագրերի սերիան և Ն.Ը (ցուցակի յերկրորդ որինակը մնում է մթերման շրջիազորի մոտ):

28. Մտանալով մթերման շրջիազորից պարտավորագրերը, գյուղխորհրդի նախագահն ստորագրում ե այդպիսին և յերեք որվա ընթացքում անձամբ հանձնում ե համապատասխան անհատ տնտեսության գլխավոր անձին կամ տվյալ պահին ընտանիքում նրան փոխարինող չափահաս անդամին, վերցնելով նրա ստորագրությունը, և նշելով նույն ցուցակում հանձնման ժամկետը:

29. Այն դեպքում, յերբ մենատնտեսության գլխավոր անձը կամ նրան փոխարինողը հրաժարվում ե ստանալ պարտավորագիրը և ստորագրել ցուցակում, գյուղխորհրդի նախագահն այդ մտախն կազմում ե արձանագրություն, այդպիսով պարտավորագիրը համարվում ե հանձնվոծ և

մնում ե գյուղխորհրդում, իսկ արձանագրության պատճենն ուղարկում ե տվյալ մենատնտեսությանը: Միաժամանակ գյուղխորհրդին այդպիսի մենատնտեսներին կանչում ե քրեական պատասխանատվության՝ համաձայն 1933 թվի հացամթերման որենքի 13-րդ կետի:

30. Մենատնտեսներին գյուղխորհրդի կողմից հացահատիկ հանձնելու պարտավորագիր տալուց 20 որվա ընթացքում ժողկոմխորհի Մթերումների կոմիտեյի շրջիազորը պարտավոր ե ստուգեկելթե բոլոր գյուղխորհրդադիրներն արդյոք լրիվ հանձնել են պարտավորագրերը յուրաքանչյուր մենատնտեսին, թե վոչ:

31. Ժողկոմխորհի Մթերումների կոմիտեյի շրջիազորը հայտնում ե այն գյուղխորհրդին, վորի հողամասում գտնը վուժ ե տվյալ կոլտնտեսությունը, նույնպես և Զագոտղեռնոյի, Սպառկոռպի կամ Գոսսորտֆոնդի մթերման կայանին, փորին կցված են տվյալ գյուղխորհրդի կոլտնտեսությունները և մենատնտեսները, ամեն մի կողմոցի հացի հանձնման քանակն ըստ առանձին մշակույթների, իսկ մենատնտեսների վերաբերյալ՝ նրանց բոլորի կողմից հացի հանձնման քանակը, նույնպես ըստ առանձին մշակույթների:

#### IV. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՈՒՄԸ

32. Կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունների կատարման հաշվին ընդունվում են միայն հետեւյալ մշակույթները՝ ցորեն, տարեկան, բակլայի բույսեր, վարսակ, գարի, կորեկ, հաճար, սերմացու վիճ:

Կոլտնտեսություններին և անհատական տնտեսություններին հացահատիկ հանձնելու ժամանակ իրավունք ե վերապահ վուժ մի մշակույթը փոխարինել մյուսով, սակայն այն պայմանով, վոր

ա) ցորենը չի կարելի փոխարինել վոչ մի այլ մշակույթով.

բ) ՀՄԽՀ Ժողկոմիսորնի և ՀԿ(բ)ԿԿ-ի ս. թ. ապրիլի 3-ի վորոշման համաձայն, թույլատրվում ե ցորենի փոխարեն հանձնել հավասար քանակությամբ կորեկ, այսինքն՝ մեկ փութ ցորենի դիմաց մեկ փութ կորեկ.

գ) Նույն վորոշման համաձայն, թույլատրվում ե կորեկ ընդունել տարեկանի դիմաց, համահավասար քանակությամբ.

դ) «այլ» մշակույթների հանձնման պարտավորագրերի հաշվին կարելի յե հանձնել, հանձնողի ընտրությամբ, հետևյալ մշակույթները՝ վարսակ, դարի, յեզիպտացորեն, հնդկացորեն, կորեկ, սերմացու վիկ։ Հաճախ «Այլ», մշակույթները, հանձնողի ընտրությամբ, կարելի յե փոխարինել ցորենով։

33. Պետությանը հանձնվելիք ամբողջ հացահատիկը կոլտնտեսությունները և անհատական տնտեսությունները սեփական տարայով պետք ե փոխադրեն Զագոտգեռնոյի մթերման կայանները։ Պետությանը պարտադիր կերպով հանձնվող հացահատիկի ընդունումը տեղի յե ունենում Զագոտգեռնոյի կայաններում կամ, Զագոտգեռնոյի հանձնարարությամբ, այլ կազմակերպությունների կայաններում։

Այն դեպքում, յերբ վորպես բացառություն թույլ կորվի ժամանակավոր, ոժանդակ խորքային (հեռավոր) կայաններ բանալ, այդ կայաններին հացահատիկ հանձնող կոլտնտեսություններից ու անհատական տնտեսություններից, Ժողկոմիսորնի Մթերման Կոմիտեյի կողմից սահմանված ձևով, պարտավորություն ե վերցվում այն մասին, վոր նրանք վորոշված ժամկետում և իրենց փոխադրական միջցներով պետք ե ժամանակավոր մթերման կայանները հանձնված հացահատիկը փոխադրեն Զագոտգեռնոյի հիմնական պահեստները, վորի համար հացահատիկ հանձնողին վարձառում են մերձ-կայարանային ու խորքային կայանների գների միջև յեղած տարբերության չափով։

34. Կոլտնտեսության և անհատական տնտեսության

համար վորոշված պարտավորությամբ հանձնվելիք հացահատիկը պետք ե փոխադրվի Զագոտգեռնոյի, Գոսսորտֆոնդի կամ այլ մթերման այն կայանը, վոր մատնանշված ե տվյալ կոլտնտեսության կամ անհատական տնտեսության պարտավորագրերի մեջ։ Մյուս մթերման կայանները, բացի տվյալ կոլտնտեսության կամ անհատական տնտեսության համար պարտավորագրերի մեջ մատնանշվածից, իրավունք չունեն ընդունել այդ պարտավորագրի կատարման հաշվին բերած հացահատիկը։

35. Կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների պարտավորագրերի հաշվին հանձնած հացահատիկն ընդունվում է 1935 թ. համար սահմանված պետական գների համաձայն, այսինքն  $10\%$  ավելի, քան 1934 թ. պետական գները։

36. Այն սերմաքուծական կոլտնտեսությունները, վորոնք, համաձայն Հողժողկոմատի կողմից ներկայացվող և Ժողկոմիսորնի Մթերման Կոմիտեյի Հայաստանի Լիազորի կողմից հաստատված ցուցակի, մանում են կայուն ցանցի մեջ վորպես մաքուր տեսակավոր սերմացու հացահատիկ ցանողներու ու այդպիսին Գոսսորտֆոնդին մատակարարողներ, կատարում են հացահատիկի հանձնման իրենց պարտավորությունները գոյություն ունեցող սերմացվի ստանդարտների համաձայն, սերմացվի կոնդիցիաններին բավարարող մաքուր տեսակի հացահատիկով։

37. Արգելվում ե պարտադիր հանձնումների հաշվին ընդունել այնպիսի հացահատիկ, վոր իր մեջ հետևյալ չափերից ավելի խոնավություն ե պարունակում։

ա) հացահատիկային մշակույթների նկատմամբ—յերկաթուղային կայաններում՝  $17\%$ ։

խորքային մթերման կայաններում՝  $15\%$ ։

բ) վիկի սերմացվի և բակլային մշակույթների համար—յերկաթուղային կայաններում՝  $20\%$ ։

խորքային մթերման կայաններում՝  $18\%$ ։

գ) յեզիպտացորենի համար (չմաքրած կոթրուճներով)՝ 25<sup>0</sup>/<sub>0</sub>:

38. Վորպես անորակ, չի ընդունվում պարտավորությունների դիմաց.—այն հացահատիկը, վորի աղբային խառնուրդը գերազանցում եւ տարեկանի և ցորենի համար 5<sup>0</sup>/<sub>0</sub>-ը, մյուս հացահատիկային և բակլային մշակույթների համար՝ 8<sup>0</sup>/<sub>0</sub>-ը. այն հացահատիկը, վոր 2<sup>0</sup>/<sub>0</sub>-ից ավելի վնասակար խառնուրդ ունի (հաճարի ժանգար՝ 0,5<sup>0</sup>/<sub>0</sub>, գեղձատերեւ մատիտեղ՝ 0,1<sup>0</sup>/<sub>0</sub>). այն հացահատիկը, վար ծլած հատիկներ ու աղբային խառնուրդ ունի՝ ընդհանուր առմամբ 15<sup>0</sup>/<sub>0</sub>-ից ավելի, նույնպես և այրված ու նեխած հացահատիկը:

Նանորություն.—1-ին աստիճանի վարակված հացահատիկը պիտի ընդունել Մթերման Կոմիտեյի հատուկ թույլավությամբ. 1-ին աստիճանի վարակված հացահատիկն ընդունելիս կատարվում ե հատուկ զեղչ՝ քանակությունից և գնից:

39. Նման վատորակ հացահատիկ (հոդ. հոդ. 37 և 38) հանձնելու յուրաքանչյուր փորձի դեպքում մթերման կայանի վարիչը պարտավոր ե արձանագրություն կազմել՝ մատնանշելով կոլտնտեսության անունը կամ մենատնտեսի ազգանունը, վորին պատկանում ե հացահատիկի տվյալ պարտիան, և այն անձի, վորը նման հացահատիկ ե ըերել. Արձանագրության մի որինակը հանձնվում ե քննչական մարմիններին՝ հացահատիկը փչացնելու մեղավորներին հայտաբերելու և նրանց դատական պատասխանատվության կանչելու համար:

Նույնպես պատասխանատվության են կանչվում մթերման ապարատի այն աշխատողները, վորոնք մեղավոր են վատորակ հացահատիկ ընդունելու գործում:

40. Դոյցություն ունեցող գներով ընդունվում ե հետեւյալ բազիսային կոնդիցիաների համապատասխանող հացահատիկը:

Պետության հանձնվելիք հացահատիկների բազիսային կոնդիցիաները  
1934/35 թ. թ.

Խ Խ Ըստ Կարգի	ՄՇԱԿՈՒՅԹՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ	Քաշը Գրայ- ներով	Խռնա- վությունը	Աղբային համա- նուրդ	Հատի- կային խառ- նուրդ
1	ատրեկան . . . . .	715	2 չոր հ	1 տոկոս	1 տոկոս
2	ցորեն աշնան . . . . .	755	>	1 >	3 >
3	ցորեն դարնան . . . . .	755	>	1 >	2 >
4	ցորեն դարնան կոշտ . . .	760	>	1 >	2 >
5	վարոսէ . . . . .	460	>	1 >	2 >
6	դարէ . . . . .	610	>	2 >	2 >
7	հաճար . . . . .	—	>	2 >	2 >
8	կորեկ . . . . .	—	>	1 >	1 >
9	յեզիպտացորեն . . . . .	—	Խռնավ	1 >	2 >

41. Պետությանը պարտագիր կերպով հացահատիկ հանձնելու պարտավորության հաշվին հացահատիկ ընդունելիս ամբողջովին հաշվի յե առնվում միայն այն հացահատիկը, վորն իր վորակով համապատասխանում ե վերոհիշյալ բազիսային կանդիցիաներին, կամ իր աղբային խառնուրդով (բացի վնասակարից) շեղվում ե այդ կոնդիցիաներից 2 տոկոսից ավելի, իսկ խոնավությամբ՝ 16<sup>0</sup>/<sub>0</sub>-ից (չմաքրած յեզիպտացորեն՝ 24<sup>0</sup>/<sub>0</sub>-ից) վոչ ավելի:

42. Այն դեպքում, յերե հանձնվող հացահատիկի աղբային խառնուրդի և խոնավության տոկոսն ավելի յե, քան այն նախատեսված ե վերոհիշյալ կոնդիցիայի չափերով, դուրս ե հանվում այդ ամբողջ պարտիալից աղբային խառնուրդի և խոնավության տոկոսների ավելցուկը և պլանի դիմաց չի հաշվվում:

Հացահատիկի հանձնման պարտիալի քաշի դեչերը հաշվելու ժամանակ աղբային խառնուրդն ու խոնավությունը հաշվի յե առնվում առանձին:

Աղբային խառնուրդի և խոնավության այդ դեչերի

Հաշվարկը կատարվում ե տվյալ պարտիայի վորակի փաստական ցուցանիշների համեմատ, հետևյալ կլորացումներով.  
ա) կոտորակային մասերը, մինչև կեսը ներառյալ, դուրս են գցվում.

բ) կեսից ավելի կոտորակային մասերն ընդունվում են վորպես ամբողջ տոկոսներ:

43. Կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների կողմից պարտավորության հաշվին մթերման կայանը հանձնած հացահատիկի համար հաշվարկ ե կատարում սահմանված պետական գներով՝ կիրառելով ուժակցիա (զեղչ), հացահատիկը ցածր վորակ ունենալու դեպքում:

44. Հացահատիկի վորակական գնահատումը կատարվում ե ԽՍՀՄ ժողկոմխորհին կից Մթերման Կոմիտեյի հատուկ վորոշմամբ:

45. Կոլտնտեսությունների ու անհատական տնտեսությունների կողմից պետությանը պարտադիր հանձնման հաշվին հանձնված հացահատիկի հաշվիները մաքրում ե Զագուղենոյի կայանը՝ հացահատիկը հանձնելու ժամանակ։ Կոլտնտեսության ցանկությամբ նրան հասանելիք գումարն ամբողջովին կամ մասամբ փոխանցվում ե նրա ընթացիկ հաշվին։

46. Կոլտնտեսության ու անհատական տնտեսության կողմից նախորդ տարիների սերմացուների, պարենային ու կերային վարկերի դիմաց վերադարձվող հացահատիկը, նույնպես և կոլտնտեսության կողմից ՄՏ կայանի կատարած վարձատրության դիմաց տրվող հացահատիկը հանձնվում ե և չի հաշվում պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունների կատարման դիմաց, այլ հաշվի յետոնվում վորպես հատուկ սահմանված պլանների կատարում (վարկերի վերադարձնելը, ՄՏԿ-ի աշխատանքի բնավարձի կատարում և այլն):

Կոլտնտեսության կողմից հանձնվող հացահատիկի

հաշվառումն ի հաշիվ հացահատիկի պարտադիր հանձնման կամ վարկերի վերադարձման, կամ ՄՏԿ-ի բնավարձի, կատարվում ե բեռնագրերի մեջ կոլտնտեսության կողմից արած ցուցման հիման վրա։

Կորականապես արգելվում ե ընդունման փաստաթղթի մեջ միացնել տեսակի ընդունումները՝ հանձնումներ հացահատիկի մթերման հաշվին, հանձնումներ ՄՏԿ-ի բնավարձի հաշվին և վարկերը վերադարձնելու հաշվին։

Հանձնման վերոհիշյալ տեսակի դիմաց պետք ե անպայման տալ ընդունման առանձին անդորրագրեր։

47. Կոլտնտեսության կողմից պետսերմֆոնդի հետ կնքած պայմանագրերի դիմաց հանձնվող հացահատիկը հաշվի յետոնվում ի հաշիվ պարտադիր կերպով հացահատիկի հանձնման պարտավորությունների կատարման։

Կոլտնտեսություններից և անհատական տնտեսություններից պետսերմֆոնդի գծով ստացվող հացահատիկն ընդունվում ե Գոսսորտֆոնդի միավորման կողմից, վորը գործում ե Զագուղենոյի հանձնարարությամբ միայն այն կայաններում, վորոնց ցանցը հաստատված ե Մթերման Կոմիտեյի Հայաստանի հանրապետական լիազորի կողմից։

#### V. ՊԱՐՏԱՎՈՐԱԳՐԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ

48. Միակ փաստաթուղթը, վոր վկայում է կոլտնտեսությունների և մենատնտեմների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու պարտավորությունների կատարման մասին, հանդիսանում ե ընդունման անդորրագիրը, վոր տրված ե Զագուղենոյի, Գոսսորտֆոնդի կամ այլ մթերող կազմակերպությունների կողմից։

49. Ընդունման անդորրագիրը դուրս ե գրվում յերեք որինակից՝ մթերման կայանի կողմից պարտավորագրի հաշվին ընդունած հացահատիկի յուրաքանչյուր պարտայի համար։

Անդորրագրի լրացումը պետք ե կատարվի մաքուր և խնամքով, անպայման մտցնելով անդորրագրի մեջ բոլոր ցուցանիշները, վորոնք սահմանված են անդորրագրի ձևով:

50. Մթերման կայանում դուրս գրվող անդորրագրերի յերեք որբնակից մեկը տրվում ե հացահատիկ հանձնողին, յերկրորդը մնում է կայանի գրամարկղում և կայանի համար արդարացուցիչ փաստաթուղթ ե հանդիսանում, ինչպես նրա գրամական, այնպես ել նրա նյութական հաշվետվության համար:

Այդ անդորրագրերի յերրորդ որբնակը մթերման կականն ամեն որ ուղարկում ե (սուրհանդակի միջոցով կամ պատվիրված ծրարով) մթերման կոմիտեյի շրջանային լիազորին՝ սահմանված ձեռք տեղեկագրի (սվորդկա) հետ միասին, վորը կազմվում ե յուրաքանչյուր վարչական շրջանի համար առանձին:

Անդորրագրերի յերրորդ որբնակի հիման վրա մթերման կոմիտեյի շրջիազորը կատարում ե կոլտնտեսությունների պարտավորագրերի կատարման հաշվառումը, իսկ մենատնտեսների պարտավորագրերի կատարման հաշվառումը կատարվում ե գյուղխորհուրդների կողմից մենատնտեսների անդորրագրերի համաձայն, այդպիսիները մթերման կոմիտեյի շրջիազորն ստանալով մթերման կայանից՝ իր կողմից ուղարկում ե համապատասխան գյուղխորհուրդներին:

51. Յուրաքանչյուր առանձին կոլտնտեսության պարտավորագրի կատարման հաշվառումը, ինչպես և կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների պլանի կատարման հաշվառումը յուրաքանչյուր գյուղխորհուրդին կատամամբ ամբողջովին վերցրած, կատարում ե մթերման կոմիտեյի շրջանային լիազորը՝ մթերման կայաններից նրա ստացած ընդունման անդորրագրերի պատճենների հիման վրա:

52. Կոլտնտեսությունների կողմից պետությանը հացահատիկ հանձնելու առաջադրանքի կատարման մասին կոլտնտեսությունների վարչությունների ձեռքին գտնվող պարտավորագրերի մեջ նշումներ կատարում են Մթերման կոմիտեյի շրջանային լիազորները՝ կոլտնտեսության վարչության կողմից ներկայացրած ընդունման կայանի անդորրագրերի հիման վրա՝ անպայման համեմատելով այդ անդորրագրերը շրջանային լիազորների կողմից կոլտնտեսության անձնական հաշվում կատարած գրանցումների հետ:

53. Յեթե կոլտնտեսությունների կողմից հանձնման մասին ներկայացված տվյալները չեն համապատասխանում Մթերման կոմիտեյի շրջանային լիազորի սեփական գրանցումներին, շրջանային լիազորը պարտավոր ե յերեք որվաընթացքում անմիջապես մթերման կայանում ստուգել թե իր մոտ ունեցած անդորրագրերը և թե կոլտնտեսության կողմից ներկայացված անդորրագրերը, և յեթե հայտաբերի, վոր կեղծ անդորրագրեր են արված մթերման կայանի կողմից, կամ ներկայացված կոլտնտեսության կողմից, պարտավոր ե քրեյական պատասխանատվության կանչել այդ գործում մեղավոր մարդկանց:

54. Յուրաքանչյուր առանձին անհատական տնտեսության պարտավորագրի կատարման հաշվառումը և հացահատիկի հանձնման հսկողությունը կատարվում է գյուղխորհուրդներում՝ հանձնողների անձնական հաշվեկրի համաձայն, վորոնց մեջ գրանցումները կատարվում են ընդունման անդորրագրերի այն պատճենների հիման վրա, վորոնք ստացվում են գյուղխորհուրդներում մթերման կայաններից՝ Մթերման կոմիտեյի շրջանային լիազորի միջոցով:

55. Պետությանը հացահատիկը հանձնելու առաջադրանքի կատարման մասին նշումներն անհատական տնտեսությունների պարտավորագրերի մեջ կատարվում են համապատասխան գյուղխորհուրդներում, հանձնողների կողմից ներկայացրած ընդունման կայանների անդորրագրերի հիման

**Վրա:** Այդ դեպքում ներկայացրած անդորրագրերը պետք է անպայման ստուգիված լինեն զյուղինորհուրդների կողմից հանձնողի անձնական հաշվի մեջ արած սեփական գրանցումների հետ, ընդունման անդորրագրերի այն պատճենների համապատասխան, վորոնք ստացվել են շրջանալին լիազորների միջոցով ընդունման կայաններից:

Արգելվում ե հանձնողների պարտավորագրերի վրա նշումներ կատարել՝ առանց նախորոք ստուգելու գյուղինորհը սեփական հաշվառման հետ:

Ստուգման ժամանակ յեթե հայտաբերվի, վոր կեղծ անդորրագրեր են տրվել կամ ներկայացվել, զյուղինորհուրդը քրեյական պատասխանատվության և կանչում այդ գործում մեղավոր անձանց:

56. Հացի հանձնման պլանի կատարման հաշվառումն ամեն մի շրջանում տանում ե Մթերման կոմիտեյի շրջիազորը:

## VI. ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐ

57. Հիմնվելով կոլտնտեսությունների համար սահմանված հացահատիկ հանձնելու պարտավորությունների կատարման ամսական ստուգումների վրա՝ Մթերման կոմիտեյի շրջանային լիտգորը գյուղինուրդների միջոցով կատարում ե տուգանքի գանձումն այն կոլտնտեսություններից, վորոնք սահմանված ժամկետին չեն կատարել նըրանց համար սահմանված պարտավորությունները. գանձումը կատարվում է տվյալ ժամկետին պարտավորությունների չկատարված մասի շուկայական արժեքի չափով և, բացի այդ, նույնպես զյուղինորհի միջոցով, անվիճելի կարգով, մինչև ժամկետը լրանալը, հացահատիկով բռնագանձում ե այդ կոլտնտեսություններից տարեկան ամբողջ պարտավորության չկատարած մասը:

58. Սահմանված ժամկետներից վոչ ուշ քան 5 որից, զյուղինորհը նախագահը, անհատական տնտեսությունների վերաբերյալ իր մոտ կատարվող հաշվառման հիման վրա, կազմում ու ներկայացնում և Մթերման կոմիտեյի շրջիազորին այն անհատական տնտեսությունների ցուցակները, վորոնք չեն կատարել նախորդ ժամկետին հացահատիկ հանձնելու իրենց պարտավորությունները:

59. Այն անհատական տնտեսությունների նկատմամբ, վորոնք նախորդ ամսվա ընթացքում չեն կատարել պետությանը հացահատիկ հանձնելու իրենց պարտավորությունները, ժողկոմիսորհի Մթերման կոմիտեյի շրջանալին լիազորը վարվում ե ՀՍԽՀ Ք. որենսգրի 87-րդ հոդ. համապատասխան, այն ե.

ա) իրենց պարտավորությունները չկատարած աշխատավոր անհատական տնտեսություններին առաջին անգամ, յեթե այդ թերակատարումը չարամիտ կամ խմբական բնույթի կրում, գյուղինուրհուրդների միջոցով յենթարկում ե տուգանքի՝ շուկայի գներով, պարտավորությունների թերակատարված մասի հսկապատճենի չափով և այդ տնտեսություններից ժամկետից առաջ անվիճելի կարգով բռնագանձում ե հացահատիկով վողջ տարեկան պարտավորության չկատարած մասը.

բ) պետության հանդեպ մենատնտեսների կողմից հացի հանձնման պարտավորությունները չկատարելը կրկնվելու գեպքում, ինչպես և առաջին անգամ չկատարելու դեպքում, պայմանով, յեթե այդ չարամիտ կամ խմբակային բնույթ ե կրում, նույնպես և այն կուլակալին տնտեսություններին, վորոնք չեն կատարել իրենց պարտավորությունները, մթերման շրջիազորը պարտավոր ե վերոհյալ տնտեսություններին, ՀՍԽՀ քրեյական կողեքսի 87-րդ հոդվածի համաձայն, դատական մարմինների միջոցով պատասխանատվության կանչել։ Բացի այդ, հիշյալ

տնտեսությունները գյուղխորհուրդների միջոցով յենթարկվում են տուգանքի՝ շուկայի գներով, պարտավորությունների թերակատարման մասի հնգապատիկի չափով, և այդ տնտեսություններից, ժամանակից առաջ, անվիճելի կարգով բռնագրավվում ե հացահատիկով վողջ տարեկան պարտավորության չկատարված մասը:

60. Ժողկոմխորհի Մթերման Կոմիտեյի շրջանավին լիազորը պարտավոր ե կատարել կոլտնտեսությունների և անհատական տնտեսությունների վրա դրված տուգանքի լրիվ հաշվառումը և ձեռք առնել բոլոր միջոցները՝ ապահովելու ինչպես նրանց վրա դրված տուգանքների գանձումը, այնպես ել պետությանը հացահատիկ հանձնելու վողջ տարեկան պարտավորության թերակատարած մասի ժամկետից առաջ լրիվ բռնագանձումը:

## VII. ՊԵՏՈՒԹՅԱՆԸ ՀԱՅԱՀԱՏԻԿԻ ՊԱՐՏԱԴԻԲ ՀԱՆՉԱՄԱՆ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԶԱՓԻ ԴԵՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

61. Կոլտնտեսությունները կարող են պետությանը հացահատիկի պարտադիր հանձնման իրենց համար սահմանված չափի մասին բողոքարկել, Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի միջոցով, Մթերման Կոմիտեյի հանրապետական լիազորին:

Վերջինս պարտավոր ե բողոքն ստանալու որից 10 որվա ընթացքում քննության առնել այն և իր վճռի մասին հայտնել բողոք տվող կոլտնտեսությանը, ինչպես և Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորին և այն շրջանի շրջգործկոմի նախագահին, վորի շրջանում գտնվում ե բողոք ներկայացնող կոլտնտեսությունը:

Մթերման Կոմիտեյի հանրապետական լիազորի վորոշումը կոլտնտեսության բողոքի վերաբերյալ վերջնական և յենթակա չե հետագա բողոքարկման:

62. Անհատական տնտեսությունները հացահատիկի

պարտագիր հանձնման՝ իրենց համար սահմանված չափերի գեմ կարող են բողոքարկել շրջգործկոմի նախագահությանը, վորը քննության ե առնում բողոքը Դորվա ընթացքում, Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի մասնակցությամբ:

Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի հետ շրջգործկոմի նախագահության կողմից համաձայնեցրած վորոշումը վերջնական ե, հետագա բողոքարկման յենթակա չե և հայտնում ե բողոք ավողին ու համապատասխան գյուղարդին:

Շրջգործկոմի նախագահության և Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորի միջև տարածայնություն յնպած դեպքում հարցը փախադրվում է Մթերման Կոմիտեյի հանրապետական լիազորի քննարկմանը:

Վերջինս կողմից բողոքի վերաբերյալ կայացրած վըձիու վերջնական ե և հայտնում ե շրջգործկոմին ու Մթերման Կոմիտեյի շրջանային լիազորին, վորն իր հերթին հայտնում ե այդ վճռու բողոք ավողին ու համապատասխան գյուղխորհուրդներին:

63. Բողոք ներկայացնելու ժամկետ սահմանված ե ինչպես անհատական տնտեսությունների, այնպես ել կոլտնտեսությունների համար 15 որ՝ պետությանը պարտադիր հացահատիկի հանձնման պարտավորագրերը նրանց հանձնելու որից հաշված։ Այդ ժամկետը լրանալուց հետո վոչ շրջգործկոմը և վոչ ել Մթերման Կոմիտեյի հանրապետական լիազորները քննության համար վոչ մի բողոք չեն ընդունում։

64. Այս հրահանգը տարածվում ե բացառապես կոլտնտեսությունների և մենատնտեսների ցանքերի վրա։ Հացահատիկի հանձնումը գանազան կազմակերպությունների ցանքերից (ՈՐՍ-եր, Անդրկոռուպերացիայի, կոոպտնտեսությունների և այլն) կատարվում ե հատուկ կարգով, վոր

Աահմանվում ե ՀՍԽՀ Ժողկոմիորհի Մթերման Կոմիտեյի  
կողմից:

Հատուկ կարգով կատարվում ե նաև հացահատիկի  
հանձնումը կոլտնտեսականների անամերձ ցանքերից:

Ժաղկոմիորհին կից Մթերման Կոմիտեյի  
Հայաստանի վազոր՝ Ա. ՅԵՍԱՅԱՆ



Վաճարան՝ Ար. Գրիգորյան  
Տել. իմբագիր՝ Ա. Մաւրադյան  
Սրբագրէ՛ Խ. Այլազյան  
Գլուխար լիադոր Հ-118  
Հրատ. Խ-240, պատվեր Խ-423, տիբաժ 1000  
Հանձնվել ե արտադրության 1935 թ. հունիսի 27-ին  
Ստորագրվել ե ապելլու 1935 թ. հուլիսի 8-ին  
Գյուղէրատի տղարան, Ցերեան, Նալբանդյան 11

ՀՀ Ազգային գրադարան



54.862